Մշակույթ

Նրա ջանքերով վառ է պահվել հանրապետության մի քանի երաժշտական դպրոցների լույսը

Նրա ուսուցիչները եղել են Անուշավան Տեր-Ղեւոնդյանը, Գեորգի Տիգրանյանը, Տիգրան Տեր-Մարտիրոսյանը՝ հայ երաժշտական մշակույթի յուրահատկությունն իր մասնաբով երեւելի դեմքեր, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսորներ: Ուսուցիչներ բառիս վեհ իմաստով, որոնք մասնագիտական-տեսական խոր գիտելիքներից բացի ներարկել են իրենց սաներին հայրենասիրություն, ջանակուռ աշխատանքի, կյանքում ընտրած գործին անդավաճան ծառայելու գաղափարները:

Զեմմա Սարգսյանը դեռեւս երիտասարդ տարիներին ուշադրություն էր բեւեռում իր վրա իր պրոֆեսորներ՝ Գեորգի Տիգրանյանը (որ տարվա մի քանի ամիսը անց էր կացնում Լենինգրադում, սանձնելով տեղի կոնսերվատորիայի պրոֆեսորի պաշտոնը)՝ Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի տեսական առարկաների իր վարելիք դասընթացը հանձնարարեց երիտասարդ աղջնակին: Հիրավի, աննախադեպ մի փաստ: Յուրովի մի ինքնություն, որը ուսանողուհին «հանձնեց» ամենայն արժանապատվությամբ: Հավանաբար եւ այդ անդրադարձի խայծ՝ սիրված պրոֆեսոր Գեորգի Տիգրանյանից ստացած այն «մկրտությունն» էր, որի նշանաբանով եւ ընթացավ Զեմմա Սարգսյանի հետագա գործունեությունը:

գա ողջ ստեղծագործական-կազմակերտչական կյանքի ուղին: Նոր էր ավարտել Կոմիտասի անվան կոնսերվատորիան, երբ Չայկովսկու եւ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցների տեսական առարկաների լավագույն մասնագետներից մեկն էր համարվում: Եվ ահա եկավ նրա կյանքում նշանավոր 1953 թվականը: Արվեստի վարչության պետ, ժամանակի հայտնի մշակութային գործիչ Հակոբ Խանջյանը իր մոտ հրավիրեց Զեմմա Սարգսյանին: «Ծանր օրակ ունենք Ալավերդիում, տեղի երաժշտական դպրոցը փլուզվում է, դու՛ կարող ես կյանքի կոչել այն»:

Այսօր դեռ կան կենդանի վկաներ, ականատեսներ, Ալավերդու երաժշտական դպրոցի նախկին մանկավարժներ եւ սաներ, որոնց հիշողության մեջ վառ են երաժշտագետ եւ տնօրեն Զեմմա Սարգսյանի ղեկավարած երջանիկ տարիները: Այո, չէր սխալվել Հակոբ Խանջյանը իր ընտրության մեջ: 1953-58-ը Ալավերդու երաժշտական դպրոցի ծաղկման, բարգավաճման եռուն շրջանն էր: Զեմմա Սարգսյանի ջանքերով վերանորոգվեց դպրոցի շենքը, նոր կարող ուժերով համալրվեց մանկավարժական կազմը, մեկը մյուսին հետեւեցին հեռահրհիր աշակերտական միջոցառումներ, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայից պարբերաբար դասախոսություններով սկսեցին այցելել հնուս եւ փորձառու դասախոսներ, իսկ ժամանակ անց դպրոցը հռչակվեց ողջ մարզում, նրա շնորհալի սաներից շատերը դարձան հանրապետական մրցույթների մասնակիցներ, հաճախ նաեւ հաղթողներ: Այս ոչ լրիվ փաստերի հետեւում Զեմմա Սարգսյանի անձնուրաց աշխատանքն էր, իր տնտեսի, մանկավարժի, գործիչի բազում կազմակերտչի օրնիբուն բազում հոգսերով, մաստաղ սեռնդի հանդեպ ունեցած իր մայրական ջերմագորով հոգատարությամբ:

Զ. Սարգսյանը Աւետ Խաչատրյանի հետ

Շուտով նրա գործունեության մասին խոսեցին Երեւանում եւ, որպես հնուս կազմակերտչի հրավիրեցին մայրաքաղաք, դարձյալ սանձնելով նրան Երեւանի երաժշտական կրթօջախներից մեկի տնօրենությունը:

Երեւանի Տիգրան Չուխաջյանի անվան (ուր դասավանդել է 11 տարի) եւ ապա թիվ 10 երաժշտական դպրոցների հիմնադիր-տնօրեն Զեմմա Սարգսյանը ձրտեղ էլ որ մատնցել է իր մասնագիտական-հաղաքացիական պարտքը իր ընտրած գործին, ամենուրեք թողել է լուսավոր, բարի հետք, պրոֆեսիոնալ բարձր աշխատանքի ուսանելի սկզբունք: Նրա անուրանալի նվիրումը Հայաստանի երաժշտական-ուսումնական ասպարեզում գնահատվեց ժամանակին, 1965-ին Զեմմա Սարգսյանին շնորհվեց Հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

Սակայն ոչ միայն որպես վաստակաշատ մանկավարժ եւ կազմակերտիչ է գնահատելի նրա անձը: Երաժշտագետ մանկավարժի գրաստեղծագործությունները սպասվեցին վկայում է նրա հետաքրքիր մարդկային կերպարի, նրա լայնածիր մտավորական շրջապտույտի հետ ունեցած ուշադրության շփումների մասին: Ալբոմը բացում է Մարտիրոս Սարյանը՝ հայոց սուխարիի՝ միայն իրեն բնորոշ յուրահատուկ նկարչական պլաստիկայով ուղղագծված բնապատկերներով եւ ջերմագին մաղթանքով ալբոմաստիրոջ ծննդյան առիթով:

Ընթերցելով ալբոմում զետեղված Համո Սահյանի, Գեորգ Էմինի՝ Զեմմա Սարգսյանին ընծայված բանաստեղծական տողերը, Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսը ասել է. «Իրենց նման բանաստեղծություն գրել չեմ կարող, ուստի թողնում եմ ալբոմում Օրհնությունը»:

Ալբոմի այնահարությունը էջերից է Գրիգոր Խանջյանի «Վարդան Մամիկոնյան» գոբելենի էսքիզը:

Ալբոմում տեղ են գտել հայ եւ այլազգի մշակույթի այնոիսի երեւելի գործիչների ձեռագրեր եւ ընծայումներ, ինչոիսիք են Արուս Բաբայանը, Գեւորգ Ասեմյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Տաթեւիկ Սազանդարյանը, Ղուկաս Չուբարյանը, Սոս Սարգսյանը, Պետրոս Ժամկոչյանը, Գուսլալ Էռնեսաթսը, Եվգենի Սիմոնովը, Վիկտոր Տրեցյակովը, Նինա Մակարովան, Էդվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Զուրաբ Սոսկիլավան, Վլադիմիր Սոիվակովը, Հովհաննես Չեիշյանը, շատ այլ անձինք, եւ, իհարկե Արամ Խաչատրյանը, որը մշտապես եզակիորեն էր առանձնացնում Զեմմա Սարգսյանի երաժշտական բացառիկ շնորհը, ջերմ հաղորդակցությամբ շոայլորեն օժտված նրա մարդկային էությունը:

Այսօր, բոլորած իր 75 տարին, կյանքի ավելնով չի: Զեմմա Սարգսյանը տակավին «սուրը պայտան չի դրել»:

«Երաժշտագետ Զեմմա Սարգսյանը ձեռնարկել է մի աշխատանք «Երեւան հաղաքի երաժշտական կյանքի պատմությունը» խորագրով: Իմ կարծիքով շատ արժեքավոր եւ հիմնավոր աշխատություն է», **Դավարտս Սարյան**:

«Անհասությունն ունենալով բարձր արժեք, ավելի հարկավոր է, քան գիտական ասպիրանի արժանացած շատ աշխատություններ: Ուզում եմ նշել նաեւ այս գործի գիտական նշանակությունը: Ներկա դժվար պայմաններում կան հույժ պրոբլեմներ, իմ համոզմամբ այս աշխատությունը պետք է լինի առաջնահերթների շարում: Եթե որեւէ կարող կազմակերտություն կամ կարող անձնավորություն հանձն առնի իրականացնել այս աշխատանքի հրատարակությունը, կարժանանա լայն հասարակության երախտիքի: Զեմմա Սարգսյանի աշխատությունը սխրանքի հավասար երեւույթ է, որում պետք է համոզվի ամեն ոք, ով կառնչվի այդ գործին», **Էդվարդ Միրզոյան**:

Արդյո՞ք է խորհում հիշյալ աշխատության մասին **Ալեքսանդր Հարությունյանը**. «Իր ժամանակի պատկերելիությամբ, սա մի խոշոր կտավ է, որտեղ մենք տեսնում ենք երաժշտական կյանքի հեռ առնչվող բոլոր մանրամասները: Աշխատանքն իր տեսակի մեջ եզակի է-անշուշտ արժանի լուրջ ուշադրության, օգնության, որպեսզի դառնա ընթերցողների լայն շրջանակի սեփականություն»:

Փաստերն ու կարծիքները խոսում են եւ չեն կարոտում որեւէ մեկնաբանության: Ավելացնենք, որ ՀՅ վաստակավոր ուսուցիչ, երաժշտագետ, հիմնադիր-տնօրեն, մանկավարժ Զեմմա Սարգսյանը իր ողջ կյանքի, գործունեության ընթացքում մեկ անգամ չէ, որ արժանացել է իր գործի պատշաճ գնահատմանը, տեսել, վայելել իր արածի բարերար արդյունքները:

Հուսանք, որ վերոհիշյալ եւ մեզանում հույժ կարեւոր աշխատության լույս ընծայմամբ խնդիրը բացառություն չի լինի եւ մեր հասարակության լայն օղակները երաժշտասերներից ուսանողությամբ ներառյալ ոչ հեռու ապագայում իրենց գրադարակները կհարստացնեն եւս մեկ արժեքավոր գրքով:

Ռ. Հ.

ԹԵՔԵՅԱՆ-50

ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակը դարշավ իսկապես համահայկական

Մրցանակաբաշխություն նորաբաց Թեքեյան կենտրոնում

Թեքեյան մշակութային կենտրոնի բացման նույն օրը երեկոյան ցուցադրվեց մի գեղեցիկ արարողությամբ՝ ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակաբաշխությամբ: Հայկաշեն Ուզունյանը լայն ճանաչում ունի թե սփյուռքում եւ թե Հայաստանում իբրեւ ԹՄՄ-ի հիմնադիր անդամ եւ ՌԱԿ կենտրոնական վարչության նախագահ: 1970-ից ի վեր այս մրցանակը տրվել է Սփյուռքի ականավոր գրողներին («**Ազգ**», հոկտեմբերի 15):

Անցյալ տարի որն Ուզունյանը վճռեց մրցանակին հաղորդել իսկապես համահայկական բնույթ՝ ոգեշնչելով 1995-96 թթ. Հայաստանում լույս տեսած գրքերի հեղինակներին:

Ցավոտ ինչ՝ որն Հայկաշեն Ուզունյանը, հիվանդության պատճառով չկարողացավ նեկա գնվել հանդիսավոր արարողությանը, նրա անունից հանդես եկավ դուստրը՝ Ժենեիգ Թալին Ավագյանը:

«Էս սփյուռքը որ չլինի, մենք ի՞նչ պիտի անենք, էս խոսքում նշեց Լեւոն Հախվերդյանը, մյուս կողմից՝ մենք որ չլինենք, սփյուռքը ի՞նչ պիտի անի»:

Դասակազմը (թեպետ Լեւոն Հախվերդյանը կտրականապես դեմ էր այս բառին՝ դասակազմը բող մեր պետությունը ունենա, որ չունի) հավաքեց 1995-96 թթ. Հայաստանում լույս տեսած բոլոր գրքերը, ինչը չափազանց դժվար է, քանի որ կազմակերտված առեւտուր չկա, եւ ընտրեց Սասուր Մնացականյանի (հեսմահու) «Հայրենիներ» հայագիտական հավաքագրական աշխատությունը, որի մեջ ամփոփված են 17 տարվա հանառ աշխատանքի արդյունք հանդիսացող 1170 հայրեններ, Սերգեյ Վարդանյանի՝ Հայաստանի մայրաքաղաքները մանրամասնորեն ներկայացնող (աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ, պատմիչների ծանոթագիտական նոթերի վկայություններ, ճարտարապետություն) աշխատությունը: Դասակազմի ուշադրությանն է արժանացել հին Երեւանի սակավ վկայագրություններից մեկը՝ Հրայր Հովհաննիսյանի «Կապույտ լեռան տուֆը»: Եվ վերջապես չորրորդ մրցանակակիրը դարձավ հայ մշակույթի, մասնավորապես մանանկարչության գիտակ եւ պրոպագանդող, երեք ռուսալեզու, բայց հայաբովանդակ գրքի հեղինակ («Սուր եւ վահան», «Մարդիկ եւ ճակատագիրը», «Սուրբ Ղազարի հարությունը»), «Մատենադարան» բազմատեղանոց վավերագրական ֆիլմի սցենարի հեղինակ կիսմ Բակչին: Մրցանակը շնորհվեց հայերեն թարգմանված «Սուրբ Ղազարի հարությունը» գրքին, սակայն դա հարգանքի եւ երախտագիտության արտահայտություն էր կիսմ Բակչիի՝ երեք տասնյակը բոլորած հայանվեր գործունեության նկատմամբ:

Մրցանակաբաշխության արարողությանը հաջորդեց երկու գրքի շնորհանդեսը: Նախ Սերգեյ Գալստյանը ներկայացրեց ԹՄՄ հանգուցյալ նախագահ, արժանահիշատակ Ֆրունզե Դավլաթյանի ստեղծագործական ուղին պատկերող ալբոմը, որի տպագրման հովանավորն է հանրապետության նախագահը: Ցավոտ, այս փաստը վարպետը այդպես էլ չիմացավ: Ալբոմում օգտագործվել են Ֆ. Դավլաթյանի արխիվից հավաքած բացառիկ նյութեր, սկզբնական շրջանից մինչեւ Վիքորգ՝ համառուսական ցանցային հինգերորդ փառատոնի ժամանակ Ֆրունզե Դավլաթյանի 70-ամյակի նշումը, Ռոլան Բիկովի նվիրած 70 վարդը եւ հատուկ մրցանակի շնորհումը՝ «համաշխարհային կինոյին անձնուրաց ծառայելու համար»:

Իր հերթին Երվանդ Ազատյանը մատուցեց սփյուռքահայ արձակագիր Գուսգի Միհայելյանի «Ասնան տերեւներ» գիրքը: Մեր առաջ ներկայանում է ամերիկահայ ընտանիքը, նրա բախումն ամերիկյան հասարակության գլոբալ խնդիրների հետ, եթի որոնումները... «Այս գրքում բացակա է իդեալականացման ոգեշնչանքը, որով սովորաբար մատուցվում է սփյուռքահայ ընտանիքի առօրյան» (Ե. Ազատյան), այս գիրքը ոչ թե հանգստացնում, այլ անհանգստացնում է: Շնորհավորելով հեղինակին՝ Միլվա Կատուսիկյանը իր գիրքը նվիրեց նրան՝ իբրեւ սփյուռքահայ եւ հայրենաբնակ կին գրողների բարեկամության խորհրդանիշ:

Ի. ՍԱՐՈՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Նկարչի խմբագիրը աշխարհընկալումը

Դարշյալ Երեւանում է Ռոդոլֆ Խաչատրյանը

Երեւանի արվեստասեր հասարակության առջեւ կրկին իր դռները է բացել հաղարի Ազգային պատկերասրահը: Առիթն այս անգամ տաղանդավոր գծանկարիչ, երկմիասնական կերպարների անզուգական կերտող Ռուդոլֆ Խաչատրյանի 60-ամյա տարեդարձի առթիվ բացված ցուցահանդեսն է, որն ընդգրկում է նկարչի վերջին շրջանի գործերը, ընդհանուր խորագրով «Բազմաչափ օբյեկտներ»: Յուրօրինակ աշխարհ են ներկայացնում այդ գործերը, որտեղ առարկան դիտարկվում է եռ՝ բարձրությամբ, եռ՝ խորությամբ, եռ՝ լայնությամբ: Ժամանակը, որ տեղ է գտել նրա նկարչության մեջ, ընկալվում է իբրեւ օբյեկտի չորրորդ չափ:



Նկարիչը հավատարիմ է մնացել առարկայի հավեստնանկան ըմբռնողականությանը իբրեւ իրական ծնեւ եւ անընդհատ զարգացրել է այդ ձեւին մոտենալու իր սկզբունքները:

Ռուդոլֆ Խաչատրյանի երկմիասնական կերտարը ծնվում է որոնես ոլլատիկ եւ գեղանկարչական լուծումների արդյունք: Այնուհետեւ այն ոչ միայն ատրում է իրեն հատուկ օրենքներով, այլեւ զարգանում է «ինքն իրեն», համայա կենսաբանորեն: Նկարիչը շարունակում է փնտրել, ինչպես ինքն է անվանում այդ կերտարը՝« մարդու բանաձեւը», Ադամին, որից ողջ մարդկությունն է սերվել:

Սա XX դարի նկարչական արվեստի մոտեցումներից է: Այս արվեստի հիմնադիր համարվում է տաղանդավոր նկարչ Եվգենի Քոչարը եւ, որն այսօր յուրովի զարգացրած մեզ է ներկայացնում . Ռուդոլֆ Խաչատրյանը, եւ համարվում է հոյլայան ավանդների եզակի հոգեւոր ողեգիրը:

– Ես շատ ուրախ եմ, որ այս ցուցահանդեսը բացվում է Հայաստանում, ասում է նկարիչը:

Նրա արվեստը բարձր է գնահատվում ոչ միայն հայրենիքում, այլեւ Մոսկվայում, Լոնդոնում եւ ամենուր, որտեղ նա ունեցել է իր անհատական ցուցահանդեսները:

ՎԱՐԴՈՒՀԻ ՀԱՎՈՒՅՆ
ԵՊՀ մուտքավիսիկայի բաժնի
V կուրս